

ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հիմնադրման առաջին աշխատաժողովի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մարտի 23-ին GIZ գրասենյակում կայացավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հիմնադրման առաջին աշխատաժողովը:

Աշխատաժողովի վարողներ՝
Վարդան Համբարձումյան, ՌԶԳ ՀԿ, ՏԻՄ զարգացման դեպարտամենտի տնօրեն,
Գագիկ Թովմասյան, արոտների կառավարման փորձագետ:

Բացման խոսքով հանդես եկավ Վ. Համբարձումյանը: Նա ողջույնի խոսքից հետո ներկայացրեց հանդիպման նպատակը և շնորհակալություն հայտնեց Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության /GIZ/ «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը



(ԿԻԿ) Հարավային Կովկասում» ծրագրի հայաստանյան թիմի ղեկավար Քարսթեն Շուլցին հարթակի ստեղծման աշխատանքներին ակտիվ աջակցություն ցուցաբերելու համար: Խոսքը փոխանցվեց Քարսթեն Շուլցին, որն իր հերթին շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, ասելով, որ հպարտ է հյուրընկալել Հայաստանի Հանրապետության արժանի կառավարման ոլորտում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին, և կարծիք հայտնեց, որ համատեղ հարթակի ստեղծմամբ ներկաները համագործակցության նոր էջ են բացում: Այս հարթակի ստեղծումը կօգնի ոլորտում ներգրավված շահագրգիռ կողմերին խուսափել և կանխել բոլոր կրկնությունները: Պ-ն Շուլցը հույս հայտնեց, որ այն կնպաստի գյուղաբնակների եկամուտների ավելացմանը:

Վ. Համբարձումյանը օրակարգը ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց ՀՀ Գյուղատնտեսության փոխնախարար Աշոտ Հարությունյանին, որը ողջունեց և բոլորին մաղթեց բեղմնավոր աշխատանք: Նա շեշտեց, որ հարթակի հիմնադրումն ու գործունեությունն ի սկզբանե համարում է աշխատանք, և հաշվի առնելով ներկաների փորձառությունը, հույս հայտնեց, որ յուրաքանչյուրն իր ավանդը կունենա նպատակի իրականացման գործում, և վերջնական արդյունքը կնպաստի հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը:

Այնուհետ, Վ. Համբարձումյանը մասնակիցներին առաջարկեց հակիրճ ներկայացնել յուրաքանչյուր կազմակերպության կատարած աշխատանքներն այս ոլորտում:

Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի ծրագրերի կառավարման և զարգացման տնօրեն Գեորգի Խաչատրյանը նշեց, որ հիմնադրամի միջոցով իրականացնում են CARMAC ծրագրերը, որոնց շրջանակներում նրանք մոտ 200 համայնքներում ներդրել են արժանի կառավարման համակարգեր, հիմնել են արտօգտագործողների կոոպերատիվներ, շուրջ 135 համայնքներում կառուցվել են ջրարբիացման համակարգեր և հիմա էլ շարունակվում են արժանի կառավարման ջրարբիացմանն ուղղված աշխատանքները; Նա նաև նշեց, որ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը մեծ հույսեր է կապում հարթակի գործունեության արդյունքների հետ:



Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ նախագահ Մկրտիչ Այվազյանը տեղեկացրեց, որ կազմակերպությունն իրականացնում է «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագիրը թվով 100 գյուղական բնակավայրերում և կիրառում է, այսպես կոչված, արժեշտի մոտեցումը՝ ֆերմերից դեպի շուկա: Ի թիվս այլ բաղադրիչների, պ-ն Այվազյանը նշեց, որ արժանի կառավարումը նույնպես շատ կարևոր են համարում, և ունեն արդյունավետ համագործակցության փորձ հանդիպմանը ներկա գտնվող գործընկերների հետ: Նա տեղեկացման կարգով նշեց նաև, որ այս տարի ծրագիրը կընդլայնվի դեպի Հայաստանի հյուսիս՝ ներառելով Շիրակի, Լոռվա, Տավուշի և Գեղարքունիքի մարզերը՝ այսպիսով կրկնապատկելով ծրագրի թիրախային բնակավայրերի քանակը և հասցնելով դրանք

200-ի: ՌԶԳ ՀԿ նախագահը շեշտեց նաև, որ հանդիսանալով հարթակի ձևավորման ակտիվ մասնակից, ՌԶԳ ՀԿ-ն ակնկալում է արդյունավետ համագործակցություն:

ՀՀ Վարչապետի խորհրդական Արիաննե Կառիլինն աշխատաժողովում ներկայացնող Արգիշտի Նիկողոսյանը նշեց, որ տիկին Կառիլին չի կարողացել ներկա գտնվել հանդիպմանը, սակայն պատվիրակել է հանդիպման ողջ բովանդակությունը փոխանցել իրեն: Նրա խոսքով՝ միայն ջանքերի համադրման շնորհիվ հնարավոր կլինի հասնել ցանկալի արդյունքների:

ՀՀ Բնապահպանության նախարարության աշխատակից Աշոտ Վարդևանյանը նշեց, որ ՀՀ-ում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները 452-ն են, որոնցից շատերն աճում են արոտավայրերում, և իրենց խնդիրն է նաև այդ տեսակների պահպանությունը:

Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Հողերի և անտառների կայուն կառավարում հյուսիս-արևելյան լեռնային լանդշաֆտների համար» ծրագրի ղեկավար Հովիկ Սայադյանը նշեց, որ ծրագրի շրջանակներում ունեն 1000 հեկտար անտառային դեգրադացված արոտավայրերի վերականգնման խնդիր:

GIZ, «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը /ԿԻԿ/ Հարավային Կովկասում» ծրագրի խորհրդատու Աստղիկ Դանիելյանը նշեց, որ GIZ-ն ակտիվ համագործակցել է գործընկեր կազմակերպությունների հետ, ի դեմս՝ Գյուղատնտեսության նախարարության, Ռազմավարական զարգացման գործակալության, և ոլորտում ներգրավված բոլոր կողմերի հետ: Ա. Դանիելյանը հույս հայտնեց, որ հարթակի շնորհիվ կարող են ավելի արդյունավետ դարձնել և ակտիվացնել գործունեությունն այս ոլորտում:

Վ. Համբարձումյանը բնական կերային հանդակների կայուն կառավարման խնդրի կարևորության և ներկայիս իրավիճակի ներկայացման համար խոսքը փոխանցեց արոտների կայուն կառավարման փորձագետ Գագիկ Թովմայանին: Փորձագետը նշեց ոլորտում առկա խնդիրներն ու դրանց առաջացման պատճառները: Նա պարզաբանումներ արեց ոլորտում առկա հետևյալ հիմնական խնդիրների շուրջ.

- Բուսածածկի որակական կազմի և քանակական ցուցանիշների կրճատում,
- անկանոն կառավարման արդյունքում վերացման վտանգի առաջ կանգնած բուսատեսակներ,
- արոտային տարածքների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքը շարքային ֆերմերի, տնտեսավարողների, կամ արդեն ձևավորված ՏԻՄ մարմինների կողմից,
- արոտագտագործողների կառավարման փորձի և համապատասխան մասնագետների բացակայությունը,
- մասնավոր սեփականատիրական իրավունքների ձևավորման արդյունքում շարքային տնտեսավարողի, փոքր ու միջին ֆերմերային տնտեսությունների համար լեռնային հեռագնա արոտների քիչ հասանելիությունը, հեռագնա արոտների թերօգտագործումը,
- համայնքամերձ հատվածի արոտների գերօգտագործումը, և դրանց դեգրադացիայի արագ խորացումը,
- բնական կերհանդակների և արոտների բուսական ծածկի բուսաբանական կազմի, նրանց տնտեսական և էկոլոգիական որակների փոփոխությունը, դեգրադացման և էռոզիայի դեմ համակարգված պայքարի բացակայությունը,
- նախկինում ձևավորված ենթակառուցվածքների քայքայումն ու շահագործման համար ոչ պիտանի վիճակը,
- վերջին տարիներին տարբեր կառույցների կողմից արոտների կառավարման ոլորտի ենթակառուցվածքների և դեգրադացված արոտների բարելավմանն ուղղված

աշխատանքների ոչ համակարգված բնույթը, համայնքների կողմից ծրագրերի շարունակականությունն ապահովող աշխատանքների ոչ պատշաճ մակարդակը,

- ոլորտին վերաբերվող օրենսդրական դաշտի անկատարությունը և դրանից բխող հակասությունները:

Հաջորդիվ, հանդիպման վարող Վ. Համբարձումյանը համակարգման հարթակի ստեղծման անհրաժեշտության, գաղափարի ու տեսլականի, նպատակների ու ակնկալվող արդյունքների ներկայացման համար խոսքը փոխանցեց Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ Կարեն Թորոսյանին, որը տեղեկացրեց, որ հարթակի ստեղծման գաղափարի նախնական հայեցակարգը մշակվել է GIZ, SDA և ADF կազմակերպությունների համագործակցության արդյունքում: Եվ որպես հարթակի կարգավորման խնդիր, պ-ն Թորոսյանը ներկայացրեց հետևյալ կետերը.

- կայուն կառավարման ոլորտում առկա խնդիրների բացահայտում,
- փորձի փոխանակում, աշխատանքների համատեղ պլանավորում,
- համակարգված տեղեկատվության տրամադրում/փոխանակում,
- կրկնվող ծրագրերի բացառում, համատեղ ծրագրերի իրականացում,
- ոլորտը կարգավորող իրավական և մեթոդական կանոնակարգերի մշակում,
- իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացում,
- արդյունավետ կառավարման մոդելների նույնականացում,
- ոլորտում իրականացվող գործողությունների փոխլրացում,
- առաջարկությունների ներկայացում շահագրգիռ գերատեսչություններին՝ ոլորտը կանոնակարգող օրենսդրական և գերատեսչական լուծումների վերաբերյալ:

Ներկայացումների ավարտից հետո պ-ն Թովմասյանն առաջարկեց ներկաներին տալ հարցեր և կազմակերպել լուրջ քննարկումներ:

Տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի ներկայացուցիչ Հռիփսիմե Բաբայանը հարցրեց, թե հարթակը օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններով ինչպես է հանդես գալու: Հարցին պատասխանեց պ-ն Թովմասյանը: Նա նշեց, որ այս համատեքստում որպես ներկայացնող և իրականացնող դիտարկվում է Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը, և սա կլինի հիմնադրամի հիմնական առաքելությունը: Հայեցակարգի շրջանակներում բոլոր հարցադրումները, օրենքների փոփոխման, լրամշակման, ենթօրենսդրական ակտերի և կառավարության որոշումների հետ կապված բոլոր այն բացերը կամ փոփոխման ենթակա դրույթները, որոնք կհիմնավորվեն հայեցակարգի շրջանակներում, հիմնադրամը կներկայացնի կառավարություն:

Այնուհետև հանդիպման վարող պ-ն Թովմասյանը հարց տալու իրավունքը փոխանցեց Բնապահպանության նախարարության ներկայացուցիչ պ-ն Վարդևանյանին, որը մի քանի հարց-առաջարկներ բարձրաձայնեց: Առաջին հարցը վերաբերվում էր արտավայրերի ջրաբքիացմանը, երկրորդը՝ հարթակում Համաշխարհային բանկի ներկայացուցչությանը: Երրորդ հարցով պ-ն Վարդևանյանը ցանկացավ ճշտել Գիտության և ազգային ակադեմիայի ներկայացուցիչների դերը հարթակում: Հաջորդ հարցը վերաբերվում էր անտառի պետական կոմիտեի մասնակցությանը աշխատանքներում: Եվ վերջին հարցով պ-ն Վարդևանյանը բարձրացրեց աշխատանքներում նոր տեխնոլոգիաների՝ մասնավորապես հեռահար զոնդավորման հնարավորությունների օգտագործման համար համապատասխան մասնագետների ներգրավվման հարցը: Գյուղատնտեսության փոխնախարար Աշոտ Հարությունյանը ցանկություն հայտնեց, որ ջրային պետական կոմիտեի ներկայացուցիչ ևս մասնակցի հարթակի աշխատանքներին: Պատասխանի համար Գ. Թովմասյանը խոսքը

փոխանցեց Կարեն Թորոսյանին, ով նշեց, որ Համաշխարհային բանկն իր ներկայությունը հարթակում արդեն իսկ ապահովում է CARMAC-ի միջոցով: Գ. Թովմասյանն ի լրումն քննարկվող ջրարբիացման բաղադրիչի նշեց, որ ՌԶԳ ՀԿ կողմից իրականացվող ծրագրերում ենթակառուցվածքների ձևավորման մասով առաջնահերթությունը տրվում է ջրարբիացման խնդրի լուծմանը: Այնուհետ, հեռահար զոնդավորման և մոնիտորինգի մասով բարձրացված հարցին պատասխանելու համար Գ. Թովմասյանը խոսքը փոխանցեց GIZ կազմակերպության ներկայացուցիչ Աստղիկ Դանիելյանին, որը նշեց, որ մասնագիտական առումով նույնպես հարթակը փակ չի լինելու:



Հաջորդիվ խոսք վերցրեց «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի ներկայացուցիչ Գագիկ Մարդարյանը, ով նշեց, որ համամիտ է ՌԶԳ Նախագահ Մ. Այվազյանի հետ, որ կառավարման և ռազմավարության առումով շատ կարևոր է սկսել շուկայից: Գ. Մարդարյանը կարծիք հայտնեց, որ հարթակի մեկնարկը հետաքրքիր զարգացումների սկիզբ կարող է լինել:

Վերջում, պ-ն Թովմասյանը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին աշխատաժողովին մասնակցելու և ակտիվ քննարկման համար և փաստեց, որ մեկնարկը կայացավ: Ակնկալելով գործուն մասնակցություն բոլոր կառույցների կողմից, նա նշեց, որ պահը հասունացել է նման հարթակի ձևավորման համար, որը պիտք է հանգեցնի իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացմանն ու արդյունում ծառայի մեր հանրապետության շարքային արոսոգտագործողի և մեր գյուղերի շենացմանն, ինչպես նաև սոցիալական խնդիրների լուծմանը: